



ԵՐԾՈՒՒ

ՎԱՍԿՈՒԲԱՆԸ

ԹԻՈՒՑԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԹԵՒՕՔ
ՅԱՐԾՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐԱԳԱՅ

ԽՄԲԱԳԻՐ ՀԱՅՐԵՆԱԽՕՍ
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՈՐԻ
ՅՈՒԼԻՍ 1858 • ԹԻՒ 7 •

ՎԱՆՏՈՍՊ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՎԱՍԿՈՒԲԱՆ ԱՐԺՈՒՈՅՆ
ԻՎԱՐԱԳ



THE

REPUBLICAN

OF THE
UNITED STATES OF AMERICA

FOR THE
PRESIDENTIAL ELECTION

OF 1876
AND
FOR THE
ELECTION OF
MEMBERS OF CONGRESS

AND
FOR THE
ELECTION OF
MEMBERS OF THE HOUSE OF REPRESENTATIVES

ՊՆՏարօնոյ Հայեկաց գեղջէն՝ արդարեւ հոց հոգեպարար պարգեւեցաւ կարօտեալ մանկուոյն Հայոց . Մեսրոպն այն, որ գերաշխարհիկ վարուքն իբրեւ հրեշտակ անմարմին հանդիսացաւ յաշխարհի, որ թէպէտ հանդոյն մեծին՝ Ներսիսի ի սկիզբն առաքինութեան իւրոյ մօտեւր ընդ բարձրագոյն դուռն Արշակունի թագաւորութեանց, եւ անպէն հեղինական ճոխագոյն դպրութեամբն մեծարեալ լինէր ի պատիւ պաշտօնատարութեան արքունական զիւանին, եւ միանգամայն երեւելի հանդիսանայր քաղաքական եւ զինուորական աշխարհալսար կարգօր : Այլ անդ ի պատիւ վիճակի փառաւորութեան իւրոյ՝ թեւակոխէր գերազանց եւս առաքինութեամբ խաչաբարձ հետեւմամբ ի վնուորութիւն Աւետարանին մրտանել, եւ ի զիւանի Բրիտանական եկեղեցւոյն լինել զպիր եւ վարդապետ : Թողոյր մերկանայր այնուհետեւ զԱղապար շապատու պալատանն զամենալայն ճոխագոյն կեանս, երթայր եւ զրկէր յօժարագոյն սիրով զանապական կարօտալիր կեանս . ընդ շքեղաշուք շնուածոցն՝ զանձուկ սյրիկ լերանց . ընդ զինուորական փառազարդ զգեստուն՝ զանպաճոյճ՝ հանդերձիկ աղքատաց . ընդ փափկութեան անորժանաշակ կերակրոցն՝ զվայրենաբոյս բանջարս . ընդ խրախճանակից ընկերութիւնս պալատականայն՝ միայնաւոր լռին ի միջի լերանց ընդ միանձունս օթագայեալ . միով բանիւ առացից, առաքելաբար ըզպաշտօն աշխարանին խաչաբարձութեան եւ ժուժկալասիր ճղնութեան միանգամայն յանձին բերէր :

Ոչ իբրեւ զայլ լեռնակեցիկ հարսն մինչեւ ցօր վախճանին իւրոյ յանապատի զանձին եւ զհոգւոյն իւրոյ եւ եթ հոգալեալ բացակայ լինէր յեկեղեցւոյն, այլ նման վեհին Պօղոսի ի տան Աստուծոյ շրջիլ՝ եւս պարտ համարելով ի ջանէր անդուտ ի լեռնէն ի Գողթան դաւառն, եւ զմօլեալն դուռ ի հեթանոսական հայրենի սովորութիւն՝ քարոզեալ ամէր ի ճշմարտութիւն Աւետարանին . ուրանօր խաւարադէմ դեւքն հալածէին յայանապէս ի Մեսրոպայ լուսոյն երթալ թափառիլ յանջողի տեղիս Մարաց աշխարհին : Զմտաւ ամէր երա-

Հանդերձ ազատանի նախարարօքն հրճուալից դիմօք ողջունէին զընծայաբերն Մեսրոպ, անդ երգեցիկ մանկունք քաղցրաձայն նուագէին. «Նմանեալ Մովսիս Տէր վարդապետ, բերելով զգիր օրինաց ՚ի Հայաստան աշխարհ. որով լուսաւորեցան ազգ որդւոց Թորգոմայ» : Անդ նախընտիր եւ անձնանուէր աշակերտք երանելոյն Մեսրոպայ. Մովսէս, Դաւիթ անյաղթ, Արիւն եւ Մամբրէ վերժանող, Եղնիկ եւ Արծան, Յովսէփ եւ Ենովք արծուաբար սլացեալք զսիրելի վարդապետան ակումբ կաղմէին, եւ զգնդեցիկ շարս հոգեւոր նոր աթուծայից ՚ի բերան առեալ հնչէին հրճուանօք. զպերճագոյն բարբառ հայկազնեան կատարելագոյն յարմարութեամբ ձայնի հեղեալ եւ արտահնչեալ : Անդ սկիզբն առնէր հրաշալին Մեսրոպ զառաջին՝ ճաշակ Թարգմանութեան իւրոյ մատուցանել ՚ի բերանս քաղցեալ աշակերտացն. զի՛նչ « ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանձարոց եւ այլն » : Նոր հայկազն Սողոմոն Մեսրոպ հանդոյն նմին յաթոռ իմաստութեան բազմեալ, զայս բարձրագոյն առաջօք հրահանգել կամէր զհամօրէն հայոց մանկունս. իբրութե ծաներուք զիմաստութիւն եւ մի օտարանայք ՚ի նմանեւ. պատուեցէք զհանձար, որ արդ ՚ի ձեռն հարմաւէր պատկաւմաւոր վարդապետիս ձեզ ՚ի հարմութիւն ընծայի :

()ն ուրեմն, մանկունք Արամեան փոզս հնչեցէք, խնձոյս կաղմեցէք երգս յօրինեցէք, առագաւտ զարդարեցէք պարբոյրեցէք, սրտիւ ցնծացէք, հոգւով հրճուեցարուք, կայծիւ կայտոեցէք. զի ահաւասիկ կամիմ ես զիմաստութիւն ձեզ յազգականութիւն ածել եւ կցորդ առնել ձեզ եւ բարեկամ անանջատ միաւորութեամբ յամենայնի ՚ի կեանս ձեր : Աւստի սիրեցէք, համբուրեցէք եւ գրկախառն ողջունիւ փարեցէք զնովաւ. որում գեղեցկութեան նման, ոչ ոսկի աշխարհիս, ոչ մեծութիւն վաղանցուն՝ եւ ոչ այլ ինչ որ պատուական թուի յաչս յիմարագոյն մտաց՝ կարէ երբէք համեմատիլ. զի չիք ինչ նմանութիւն ՚ի ձեզ արեւուն լուսոյ եւ մթան զիշեղի : Ընդ այս անաղտ լուսով իմաստութեան ցնծացէք

բղէկէր վասն գիւտի հայկական գրոց . տուք համբոյր վեհ սրբ-
տին այն Աստուածակիր , որ հոգւոյն իմաստութեան
օթարան եղեւ եւ միանգամայն աւազան շնորհաց կազմե-
ցաւ . յորմէ բղէկեցին աղբիւրք կենդանարար ջուրց եւ դե-
տօրէն ծաւալեալ խաղացին 'ի ծաբաւուտ երկիր Հայոց . որով
զուարթացան ուռճացան մանկերամից Թարշամեալ տունիք
եւ ըստ գարնայնոյ ծառոց սպիտակ եւ ծիրանափայլ ծաղ-
կեալ բաղձաբերուն պտղովք լցին ղեկեղեցին Հայաստան
եայց . կշտապինդ վայելեալ սուրտանջ քաղցեալ ժողովուրդն
յագեցան եւ օրհնեցին զսարգեւելին Աստուած : Յորչափ
առ այս իմաստութեան սեղանոյ սրբոյն Մեսրովպայ , որ մըշ-
տապէս զարդարեալ զնին առաջի ձեր ոսկիափայլ տառիցն
կազմութեամբ , բոլորիք իբրեւ 'ի խնճոյս հոգեզուարճ խր-
րախճանաց . ինչպիսիք օրէն ճաշակեցէք եւ զմայլեցարուք 'ի
քիմ մտաց ձերոց , յաւերժաձայն երգով օրհնեցէք զՀոգին
շնորհապարգեւ եւ զսպասաւորն այսմ սեղանոյ զառաքեալն
Մեսրովպ , որ իբրեւ հրաւիրակ 'ի հրապարակս Հայաստանեաց
շրջեալ ձայնէ առ համօրէն մանկունս հայկազանց , եկայք կե-
րայք 'ի հացէ աստի եւ արբէք զգինի իմ , զոր խառնեցի ձեզ
լմով մեծալատակ քրտամբք . Թողէք անդր զանդգամու-
թիւն տգիտութեան . խնդրեցէք զիմաստութիւն . զի կեցցիք
դուք եւ ձեռն տուեալ կանդնեսցիք 'ի վեր անդրէն 'ի յո-
տին զանկեալն 'ի մահիճս տղիտութեան զոլորմելն Հայաս-
տան :



Արդարեւ՝ ասանկ ինքնակալ իշխան մը , տեսակ լտեսակ կարգադրութիւններով զարդարուած այս ընդարձակ երկրիս վայելչութիւնը տեսնալով , իր բնական ընտիր ճիւղը եւ հանձարին համեմատ եռանդով եւ ուրախութեամբ՝ իր հայրենական ժառանգութիւնը աւելի արդիւնաւոր ընելու համար , պէս պէս բարեկարգութիւններով ու շինութիւններով շքեղացնելու կը հետեւէր . եւ նախանձախնդրութեամբ կը պաշտպանէր այն զարդարուած Հայկական այգին՝ որ չքուտ թէ իր հայրենի ցանդէն պզտիկ ճիւղ մը անգամ քակուի :

Վենէն աւելի բաղդաւոր էր Արշակ , որ հոյակապ նախարարաց բնական ազնուականութիւնը քաջութիւնը եւ հաւատարիմ տիրաւորութիւնը՝ տեսած լսած եւ շատ աղէկ ըզրացած ըլլալով , ասանկ ամենայնիւ ամենայն մասամբ ընտիր յատկութիւններ ունեցող ցեղի մը գլուխ եւ հրամանատար վիճակուելը՝ որչափ մեծ երջանկութիւն եւ փառք մըն էր իւրեն . արդարեւ թէ եւ որչափ որ Պարսից ինքնակալին արտաքուստ երկրորդը կը սեպուէր , բայց այս երջանիկ վիճակաւ՝ իրօք անոր առաջինն եւ աւելի յառաջադէմն եղած էր :

Վիւցազն արքայիս վիճակը՝ ուրիշ կերպով մը եւս աւելի երջանիկ եւ բաղդաւոր ըրած էր զՀայաստան . որուն մէջ ծընանելուն համար՝ Հայկազանց ազնիւ եւ ընտիր բնաւորութիւնը իմանկութենէ ստանալով՝ բոլորովին ընտանեցած եւ Հայացած ըլլալով , բնական բերմամբ մը Վաղարշակէն աւելի՝ իր ձաղերը պաշտպանող դրովագութիւն հաւի նման՝ իր հզօր զօրութեան թեւերուն տակը առած , մասնաւոր սիրով մը աւելի կողմանէ կը պաշտպանէր ազգը : Ինչպէս որ երբոր իր հօրը հզօր զօրութեամբը նուաճեալ Պոնտացոց ապստամբութեանը լուրը առաւ , ազգին իր շահատակութեամբը արիւն թափելով ստացած երկրին տիեզերահռչակ քաջութեան եւ իշխանութեան պատուոյն վնաս մը արատ մը չդալու համար , բոլորովին իր անձը դնելով պատերազմ հրատարակեց . առաւ իրեն հետ այն յաջողաձեռն հաւատարիմ թիկնապահ եւ ազնուազարմ նախարարներուն խումբը , եւ երկարաժամանակեայ

Արամեան ազգը այնչափ դորովագուժ սիրով խնամեց . ապա
 ուրեմն ո՞վ Հայկազուն իշխանք, որչափ եւս առաւել պարտա-
 ւոր էք սիրել զայն՝ որուն բուն իսկ արեւակիցն էք եւ այն
 ազնուական սերունդէն սերեալ, արժանաւոր գլուխ հայր եւ
 պաշտպան կարգեալ էք Սատուծոյ . օտարածնունդ որդւոց
 որչափ որ խնամք տանիք՝ ձեր բուն իսկ հայրենեացը եղբարցը
 բնական նախանձաւորութեամբ մը՝ հաղարապատիկ եւ բիւ-
 յապատիկ աւելի գովելի եռանդալից սիրով մը անոր բարերա-
 րելու էք, այն ազգին՝ որ չէ թէ Արշակայ ժամանակին նման
 'իբագում կատարելութեանց զրկեալ է, հապա շատ մը դա-
 րերէ 'ի վեր բազմադիմի զիպուածով երկնապարգեւ ձը-
 րիւք եւ կատարելութեամբ զարդարեալ, եւ ամէն ազգերէն ալ
 աւելի սիրելի անզուգական ազգ մը եղած է . սիրելու է զայն,
 վասն զի երկար ժամանակն երով իբրեւ ոսկի 'ի բովս բագումնե-
 ղութեամբ տառապանօք եւ արտասուօք փորձեալ զտեալ է :
 Այս չունի այն առաջին փառաւորութեան եւ հարստութեան
 վիճակը . որ ձեռք ձգելու համար Աստուածային նախախնա-
 մութիւնը՝ ըստ խրատուն Սօղոմոնի՝ կայտառ եւ ժիր ձեռաց
 յանձնած է այն ստանալիք մեծութիւնը եւ երջանկութիւնը .
 ապա ուրեմն՝ կորուսեալները վանալը ոչխարաց սեփհական
 տերանցը աշխատութեանցը եւ ջանիցը կարօտ ըլլալով, եթէ
 չեմք սխալիւ կարելի է այնչափ դժուարութիւն չկայ անոր
 մէջ, որչափ որ ազգի մը պէտք եղած այն կատարելութիւն
 ները այն ձիւքերը որ ունի ազգերնիս, եւ հետզհետէ ստանա-
 լու վրայ է :

Արդարեւ այն ազգը՝ որ առջի ժամանակները ամէն գա-
 ւառի եւ ամէն քաղաքի մէջ տէր իշխան թեւ եւ թիկունք
 ունէր, եւ այնչափ կարօտութիւն չունեալէն զատ՝ դաւ-
 ձեալ իրեն մէջը պակաս չէին անանկ անզուգական անձինք, ո-
 րոնք միշտ բարերարութիւններ ընելու եւ ազգը աւելի շքեղ
 եւ երեւելի ընելու կը յօժարէին . հապա որչափ եւս առա-
 ւել դուք, փառաւոր եւ կարող իշխանք Հայկազունք, բնակա-
 նաւար աւելի յօժարամիտ եւ փափաքող պէտք է ըլլաք :

Արշակայ նման անոր պակասութիւնները հոգալու, որ ազգի մը պէտք եւ արժանի եղած երջանկութեան միջոցներէն զընկուած ըլլալով՝ մեծագործութեան մեծ նիւթ կը մատակարարէ ձեզի :

Ամէնէն աւելի բարեբաղնալու արժանի այն սիրելի ազգն է այս՝ որ ամէն բարեսիրտ կըթեալ եւ լուսաւորեալ ազգերը իր պատմութիւնը կարգալով, եւ իրեն բնութեանը տեղեակ ըլլալով իր նախնի փառաւորութենէն ու հարստութենէն առնարժան եւ անպարտ տեղը կործանած ըլլալը կը վկայեն : Եւսակից կըլլան անոր, եւ ամէն ազգերէն աւելի կը յարգեն ու կը սիրեն : Ահաւասիկ երջանիկ ժամանակիս ազատութեան հզօր ազդեցութիւնը, Հայաստանի քանի մը սահմաններէն մեծածեծ նոր դուռներ բնալով, դիտութեան ու քաղաքակրթութեան խաղաղասէր յանաջադէմ դետայաններն ալ՝ այն տեղը կեցած, Եւեփիս կուտան այն կիսամեռ որդւոց Հայկազանց թէ, իմաստութեան եւ երջանկութեան փառաւոր արեւդակը՝ ձեզ իր ճառադպրութիւնովը լուսաւորելու եւ կենդանացնելու կուգայ, որ ձեր վրայի տգիտութեան մառախուղը փառատելով, ձեր ակամբ եւ ոսկւով զարդարուած առարկինութեան պատկերը՝ յայտնի պիտի երեւցնէ բոլոր աշխարհի առջեւ :

Տ. Կ. ԳԱՒԱՓԱԿՃԵԱՆ :



Դ • ՏԵՍԱՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՏ

ՎԱՆ • ՎԱՄ ՀԱՄԻՐԱՍԱԿՆՏ

Ո՛րքն կամ վանտոսպ քաղաքը մեծին Հայոց վասպուրա-
կան աշխարհի երեւելի եւ բազմամարդ քաղաքն եղած է՝
հին դարերէն մինչեւ հիմայ, ուր նստած են Հայ թագաւոր-
ներ, զանազան ազգերէ մեծ կուսակալներ՝ որք տիրէին իւր
բոլորտիրը պատած շատ երեւելի գաւառաց :

Այս քաղաք ինչպէս որ մեր ճշմարտաբան պատմագրաց
կիմանամք՝ մեծագործ Շառիրամ Ասորեստանեաց Թագուհւոյն
հիմնարկածն է . որ իսէր պատկերածոյս Արայ հայկազուն
նահապետին , ի Հայաստան պատերազմաւ ճանապարհորդած
Ժամանակին , տեղւոյն դրից եւ առողջարար օդոյն շատ հաւնած՝
իւրեան իբր ամարանոց հիմնարկելով շինեց . ինչպէս որ կը վը-
կայէ քաջարուեստ Խորենեան դրիչն ասելով : « Աստ (այս
« ինքն յեզը Բզնունեաց ծովակին Աղւոյ) ակնակառոյց լեալ
« այրասիրտն այն . . . Շառիրամ , հրաման տայ բիւրուց եւ
« երկու հազարաց արանց անարուեստից գործաւորաց յԱստ-
« րեստանեաց , եւ այլոց իշխեցեալ , եւ վեց հազար իւրոց ըն-
« տրեալ յամենայն արուեստաւոր գործաւորաց՝ փայտի եւ
« քարի պղնձոյ երկաթոյ : որք ամենեքին կատարեալքն իցեն
« յարուեստ գիտութեան , ածել անխափան ի փափաքեալ
« տեղին :

Իլըսէ եւս նոյն Խորենացին թէ՛ ամենէն առաջ գետոյն
դիմացի մեծ ամբարտակը (պատ) շինել տուաւ, որ գարնա-
նային յորդութեան ժամանակին վնաս չբերէ քաղաքին, որուն
զարմանալի ամուր շինութեանը համար կըսէ եւս թէ :

“ Եւ ի պատասխանուածս նոյնոյ ամբարտակի գետոյն՝ այժմ
“ որպէս լսեմք, մարդիկ աշխարհին ՚ի հէն եւ ՚ի գաղթականս
“ փախստեամբ ամրանան իբր ՚ի ծայրս քարանձաւաց լեռանց
“ ամրացեալք : Եւ եթէ գիտրձ առնուլ դէպ ումէք լինիցի՝
“ եւ ոչ իբր պարսատկաց քար մի արժանաւոր ՚ի շինուած
“ ամբարտակին խըլել ոք զօրեսցէ, եթէ մեծաւ աշխատու-
“ թեամբ ոք ջանայցէ :

Եւս մեծագործ ամուր ամբարտակին եւ ոչ հետքն ան-
դամ հիմայ կերելի : Գուցէ Խորենացւոյ այս պատմածներ
քաղաքի ամուր քարանձաւին վրայ խմանալու է, որն որ՝ վերոյ
գրեալ յատկութիւններ բոլորն ալ ունի, միայն թէ՛ բնու-
թիւնը հրաշագործեր է զայն՝ եւ ոչ թէ մարդկային ճարտա-
րութիւն : Եւ այն դիտակն ալ՝ որ երբեմն քաղաքին վնաս
կ'սպառնայ եղեր, հիմայ երկու մղոն հեռաւորութեամբ ՚ի-
հիւսիս իւր ընթացքը փոխելով՝ Աւանոյ ըսուած նաւահան
դիստ գիւղին բովէն ծովը կը մտնայ :

Տեղոյն գրից եւ հնախա պատմութեանցը նայելով, շատ
հաւանական կերելի թէ՛ Շամիրամ թագուհին այս քաղաքը
վերնաբերդ քարանձաւի հիւսիսային կողմանէ հիմնարկած է
եղեր : Կամ թէ քառակուսի եւ կամ բոլորակ, որուն միջա-
կէտ քարանձաւն քարձրացած է իբրեւ դահ կամ արքունիք
թագաւորութեան : Ըսածներըս քանիմը տեսակ պատճառներով
կը հաստատուին :

Առաջին որ վերնաբերդի հիւսիսային տմայացեալ կողմն,
դեռ մինչեւ հիմայ աւերակաց մնացորդներ կը տեսնուին :
Երկրորդ՝ բեւեռագրաց շատն եւ կռապաշտական զոհադու-
թութեան տեղիք այն կողմերն են : Երրորդ՝ ամարանոց լինե-
լու համար հիւսիսային առկող տեղերը, միշտ ընտրելի են՝
ինչպէս որ Արտաշէս Արշակունին զԱրտամետու ծովահայեաց

Եւ ՚ի հիւսիս շեղեալ տեղն ընտրեց Սաթենիկ տիկնոջ ամա-
լանոց լինելու համար . ինչո՞ւ որ՝ ըստ աշխարհագրական դրից ,
այսպիսի տեւք ունեցող տեղեր՝ զով եւ առողջարար օդ կու-
նենան , որով եւ ամառանոց լինելու ալ շատ յարմարաւոր ։
Չորրորդ՝ քաղաքի բնակութիւնը ՚ի հիւսիս լինելով՝ հարաւայ-
ին կողմի ուղղակիքուել քաղանձաւին անձառէլի քարձրու-
թիւնը պարապի տեղ ալ կարէր բռնիլ , որով եւ Համիրամա-
կերտ ամուրն կը լինէր անառիկ , Համիրամ Թաղուհւոյ այս մե-
ծադորութեան յիշատակն՝ Ժամանակներ վրայ անցնելով
անշքացան . մինչեւ մեր Վան նահապետի Ժամանակն , որ իբր
տասներորդ էր ՚ի Պարոյրայ Բրիտանոսէն 355 տարի առաջ նո-
րէն նորոգեց այս քաղաք , եւ իւր անուանովը կոչել տուաւ
ՎԱՆ ։

Ընկեց ալ իբր 212 տարի ետեւ հայտնէր Վաղարշակ Ար-
շակունին կրկին նորոգել տուաւ այս քաղաք , հայկազուն Ար-
քայ նահապետի ողջախօհ աւաքինութեան քաղցր յիշատակն
կենդանի պահելու համար ։

Իններորդ դարու ՎՐՄԻՐ՝ Մրծրունիք Վասպուրական աշ-
խարհի Թագաւորութիւնը ձեռքբերին բերելով՝ մանաւանդ
Գաղիկ Արծրունին՝ շատ շինութիւններ քցին մէջը եւ համարեա
թէ նորէն նորոգեցին ՚ի հիմանց ։ Ասոց յիշատակն է նաեւ
սուրբ Սիօն եկեղեցին , որուն վրայ իւր տեղն ալիս լծովք ։
Արծրունի Մենեքէրիմ Թագաւորի Վապուրական աշխարհն
Սերաստիոյ հետ փոխելովն՝ այս քաղաքս ալ Յուդայ ձեռք
անցաւ , որուն քիչ միջոց տիրելն ետեւ , ինչպէս որ բոլոր
Հայաստան նմանապէս ալ այս քաղաքս իւր պաւտներով ,
Պարսից , Սարակիստաց , Թաթարաց եւ ուրիշ խառնիւծաղանձ
սողգաց ձեռք մնալով՝ անոնց ահեղ եւ անգութ աւերմանց
եւ քանդմանց նշաւակ մնաց երկար Ժամանակ . չքեալ թու-
ղաւ ըստ մարդարեւին իմ սիրելի Վասպուրական իբրեւ զառ-
ղաւար յայդեմը եւ իբրեւ զհովանի մրդապահաց ՚ի ձեռս
այրակրօն ազանց ։

1533 ին Օսմանեանք ալիւնքուելտ ահեղ պատերազմաւ

կրկին անգամ առին այս քաղաք Պարսից ձեռքէն՝ եւ այնուհետեւ ինքնադուրս տէր կացին եւ կան մինչեւ հիմայ :

1670 ին Խոսրով տաճիկ փաշայն՝ շուրջանակի պարսազ ձգելով ասոր հարաւային կողմանէ՝ նոր 'ի նորոյ նոյն դարու ամօրութեանը համեմատ հաստատ կերպով ամրացոյց . խրամներ եւ բրգաձեւ զօրեղ աշտարակներ կանգնեցնելով , որ թշնամեաց թէ յանկարծագէպ յարձակմունքէն՝ եւ թէ հրազենեաց անընկճելի մնայ միշտ :

Ատոյմէ 'ի զատ՝ գեպքեր եւ յեղափոխութիւնք մասնաւորապէս շատ պատահած են քաղաքիս . ինչպէս որ յիշատակարանաց եւ հատկաւոր տարեգրութեանց մէջ կը տեսնուին . որոնք երկարաբանութիւն չլինելու համար զանց բրինք :

Երկրորդ՝ Տիգրանայ ժամանակին Ռշտունի Բարզաբրամայ գերի բերած հրէաներէն շատեր բնակութիւն հաստատելով՝ հոս մնացին երկար ժամանակ . որոնք Պարսից Շապուհ թագաւորի օրով կրկին գերի գնացին 'ի Պարսկաստան ամեն նոյն պարագայիւք : Այնպէս որ հեաքերնին եւ յիշատակութիւնին անգամ մոռցուած է հիմայ տեղացոցմէն :

Վ անայ արդի տեսարանն կ'ստորագրուի այսպէս , բուն ինքն Վան քաղաք Բզնունեաց ծովուն արեւելեան եզերքէն ուղղակի յարեւելս մզոն ու կէս հեռաւորութիւն ունի . օդն առողջ ջուրն անախորժ՝ բայց ոչ փնասակար . Հսոյստանի միւս գաւառաց ամէն բերքերն ունի , բայց 'ի բաժնակէն եւ բրբնեմէն , որ եղանակին ցրտութեանը համար չի կարեր հասունացնել , փորձուած է որ թթենեաց մշակութիւն լաւ կը յաջողի շերտամտածութեան համար՝ թէ որ ճարտար արհեստաւորի ձեռամբ գործի դիւրի . իւր սա եւ տրական հաղորդակցութիւնն ունի հիւսիսէն Վարնոյ հետ , արեւելքէն Գաւրիժու եւ բոլոր Պարսկաստանու հետ , հարաւէն Բիւրտլուստանու , եւ արեւմուտքէն ծովափնացութեամբ Բաղիշու հետ :

Հոս կրնա՞տի շարունակ երկրիս ընդհանուր կուսակալը՝ որ ունի իւր իշխանութեան տակ 12 մեծամեծ գաւառներ , որոնք կը կառավարուին յատուկ (Միւտուրներով) ընդ իշխանու

Թեամբ մեծ Սուսակալին : Միայն բաղաժնի իւր արուեստն ապգեստանով ունի 26000 բնակիչ . որոնցմէ 13780 հոգի ուղղափառ Լուսաւորչական բուն հայ են՝ եւ միւս մնացածն տաճիկ . գնչուա : Միջի արհեստաւորներն բոլոր հայ են , որոնք օրէ օր ճարտարութեամբ յառաջադիմութեան վրայ են . եւ են ոսկերիչ , երկաթագործ , խաղախորդ , կոշկակար , դերձակ , հիւս . ճարտար կրտաւագործ եւ այլն :

Լւրդական պարանոց վաճառականութիւնը լաւ ճաղ կած է . եւ ամէն տարի մեծագումար ստակի մթերքներ՝ Վարնոյ եւ Տրապիզոնի ճանապարհաւ՝ 11 . Վօլսէն հոս կը փոխադրուին :

Քաղաքին բոլորտիքը երկու մըն է . կրկին պարսպով եւ ճախճախուտ խրամով շրջապատած՝ մանաւանդ հարաւային կողմանէ երեք գոռ ունի . որոնց կըսուին միջին գուռ , (օրթայ գաբու) , դաւրիթու գուռ , (դաւրէղ գաբուսու) նաւահանդիստ գուռ , (իսկէլէ գափու) . ունի նաեւ իւր մէջը շատ մը նորածեւ եւ փառաւոր կերպով շինուած շուկաներ եւ կրպակներ , որոնք յիրաւի քաղաքիս միջի հնութեամբ ծերացեալ կերպարանացը վրայ ճարտարարուեստ զարդ մը աւելցուցին նոր նորոգելով զՎան : Իւր հոյակապ շինուածոց մէջ երեւելի են . տաճկաց չորս մեծ մզկիթները . ասոնց մէկն է (ուլու ճամի) ըսուած բարձրակամար եւ լայնանիստ գլմբէթաւոր մզկիթն . որ է իսկ Գազիկ Արծրունւոյ շինած Ս . Սիօն Եկեղեցին , ինչպէս որ Թովմայ Արծրունւոյն գրուած ներէն ալ կիմացուի որ կըսէ :

Ստորեւ ամրականին 'ի գոգածեւ տեղւոջն , որ առ հիւսիսն առ 'ի շէղ տեսանի , շինեաց եկեղեցի հրաշագործ եւ հրաշազան յօրինուածով , Եկեղեցի տաշեալ 'ի բարանց Մանաւագեան քաղաքին 'ի Վանտոսպ , եւ հիմնարկեալ յանուն Սրբոյն Սիօնի , որ 'ի Սուրբ քաղաքին յերուսաղէմ , եւ յաջմէ սեղանոյն շինեալ ընդ նովմբ հիմամբ՝ 'ի տեղի յիշատակարանի խաչելութեան Տեառն Գողգոթայ տեղւոջ . եւ 'ի վերայ նորա շինեաց եկեղեցի զվերնատանն խորհրդական խորհրդածու


Թեան. եւ այլն :

Թողմայ Արծրունւոյ այս խօսքերէն յայտնի կըլնի եկեղեցւոյն մեծութիւն ալ Թէ ինչքան ընդարձակութիւն պէտք է ունենալ, որ Երուսաղէմի Ս. յարութեան Տաճարի նման, Բրիտոսի Տեառն մերոյ ամէն տնօրինական տեղիք իւր մէջն պարունակէ. որն որ մեծագործ ձեռքը Գագկայ արքայի ցանկացաւ կառուցանել: Այս եկեղեցին ինչպէս որ վերն ըսինք հիմայ մզկիթ դարձածէ Տաճկաց եւ շատ անշքութեան մէջ է, Թէ ներսի եւ Թէ դրսի տեսքն բոլոր եղծուած. միայն արեւմտեան փառաւոր դուռն եւ յարեւելս դարձած գեղանի տեսքն ցոյց կուտայ իւր նախնի ինչ փառաւորութիւն ունենալն: Իւր հիւսիսային պատին կից (մինարէմ) եւնոր դուռ մը շինուած է ըստ Տաճկական դէնին պահանջման: Իսկ Թէ ինչ ժամանակ Տաճկաց ձեռքը անցաւ այս եկեղեցին. յայտնի յիշատակութիւնմը չիկայ:

Խուրշին ճամբի ըսուածն ալ (որ իւր անունը իւր վրայի արձապատ գմբեթէն առնուածէ) մեծ եւ հոյակապ մըզկիթմը է տաշածոյ բարերով եւ ճարտար քանդակներով. Հայ արհեստաւորաց ձեռամբ վայելացած, քաղաքիս հարաւային կողմն կ'ընայ շուկային կից:

Քաղաքամիջի Հայոց եկեղեցիք եօթն հատ են. որոնց վրայ հետեւեալ Թւով որոշակի պիտի գրեմք ամէն պարագայիւք:

(Պիտի շարունակուի)



Գ. ԲՈՒՐԱՍՏԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵՐՆԵՑ

ՎԱՐՆԻ ՄԱՅՍԱՌ

Այլքենի փշերու մէջ ծածկուած կարմիր վարդ մը ծաղկելու կ'սկսէր, մորենիները անոր բոլորովիքը անանկ կերպով մը հիւսուած էին, որուն վրայ հազիւ թէ բիչ մը լոյս կը թափանցէր, այսու ամենայնիւ իրեն ծիրաներանդ յարդանդին մէջի ծրարին փափուկ բացուածները կը նշմարուէր, եւ բարերար մացառին հանդարտ ստուերներուն մէջ ապահովութեամբ օրէօր կը բողբոջէր :

Այսպէս անհամբեր վարդ իր գեղեցիկութեամբ ամբարտաւանցած, գարնան ծաղիկներուն մէջ յայտ յանդիման շողջողել ուզելով, սկսեց խտիւլ ամբարտաւանել մացառին՝ զինքն գերու թեան մէջ պտհելուն համար. անպիտան բռնաւոր կը կանչէր անոր, ինչո՞ւ փափուկ ու անմեղ հասակիս աղատութեանէն զրկեր ես զիս, որ տասնէ սոսկալի բանտի մը մէջ առանց փառաց, առանց խորհրդոյ եւ օգտի մը տառապանք պիտի ծերանամ :

Ու՛ր դուն, գոչեց մացառը անաչառ դէմքով մը. ամբարտանէ ո՛չ թէ զիս՝ այլ բոլ բնական թեթեւամտութիւնդ ու խօլամտութիւնդ. որ բեզ պաշտպանող բարերարիդ շնորհակալ ըլլալու տեղը անմտութեամբ կը կշտամբես. եթէ ես քեզ իմ հովանիիս տակը չպաշտպանեմ, չգիտե՞ս որ թէ արեգակին կէս օրուան կիզիչ ճառագայթները, թէ անյադ խաշանց թշնամանքները եւ թէ կարկառի գայրագին տեղատարափը ո՛րչափ մեծամեծ վնասներ տալու կ'սպառնան քու փափուկ եւ

անխորձ հասակիդ . ապա ուրեմն լռէ եւ քու վայրի եւ ան-
ծանօթ բնակութիւնդ սկսելով գոհ եղիւ :

Այս յանդիմանութիւնը վարդին սարսափ մը տալով լռե-
ցուց . բայց սկսեց մոլեղնութեան հազար գեղամբ երկննալ
ու կծկիլ , իր բռնակալ պահապանին ճնշումէն ազատելու
համար՝ փութորիկը եւ կայծակը յօգնութիւն կը կանչէր . նոյն
միջոցին՝ փութաջան գիւղացի մը ձեռքը մանգաղ մը առած՝
անօդուտ թռիկերը կտրել ուզելով , վայրկեանի մը մէջ վար-
դին բռնաւոր կարծուած հաւատարիմ պաշտպանը կը կործա-
նէր : Ապերախտ ծաղիկը լալու տեղ ուրախութենէն կը խայ-
տայ , եւ իր դժբաղդ բարերարին յաղթական դէմքով մը կը
նայի , որ իր աւերակով գետինը ծածկեր էր , եւ ցնծալով տե-
սաւ՝ որ արեւակին ճառագայթներն ալ իր ներքին կանան-
ջութեանը կը զարնէ :

Այնքանամիտ վարդը իր արդելքէն գերծեալ ըլլալով , իր
ամբարտաւան եւ խրոխտ դադաթը համարձակ բարձրացուց .
եւ առաւօտեան գեփիւռները սկսեցին ծաղրելով իր բոլոր
տիքը դալ . թռչունները ողջոյն կուտային իրենց երգերովը . եւ
արշալոյսը իր թափանցիկ մարգարիտներովը կ'սքօղէր զայն . այլ
աւանդ ինչ երագութեամբ անցան վերջացան այս հաճու-
թեան վայրկեանները . որչափ անհաստատ եւ անստոյգ է եղեր
այն ուրախութիւնը . ահա հեռուէն թրթուր մը սպառնալով
տակաւ առ տակաւ՝ կուգար ու մագլցելով իւր փափուկ ար-
մատին վերայ ելած իր սրածայր ակաւներովը կը վիրաւորէր
զայն . անոր ետեւէն կը հասնէր աղտեղի որկորածէտ խողւնջ
մինալ , որ բոլորովին գարշեցուցիչ անարդ եւ շողիքոտ խոնա-
ւութեամբ մը կրծելով կը թաթաւէր զայն : Արեգական
սատոխ տաքութեամբը վառուած այրած ոլորմելի ծաղիկը ,
իր կտտարեալ գեղեցկութեանը չհասնելէն առաջ , իրեն զօ-
րութիւն տուող տերեւներէն բաժնուած սկսեց մեռնիլ , որ
իզուր իրեն օգնութեան կը կանչէր մացառը . ահաւասիկ այս
կերպով խեղճ ծաղիկը երջանկութիւնը կորսնցնելով իր թե-
թեւամտութեանը գոհ եղաւ :

Ո՛ր նորահաս սիրելի ընթերցողներ . դուք որ ծնողաց կամ
 իմաստուն բարեկամի մը հովանաւորութեան տակը առանց
 աշխարհիս փորձութիւնը տեսնալու խաղաղութեան ու հան-
 գստութեան մէջ կ'ապրիք , ճանչցէ՛ք ձեր երջանկութեան
 յարգը . չլայ որ այն ձեզ պահպանող հնազանդութեան պի-
 տանի ու թեթեւ լուծը մեծ ու ծանր բեռ մը կարծէք . եւ
 այն դժբաղդ վարդին նման ինքզինքնիդ վտանգի մէջ ձգէք .
 ուրեմն ձեր մէծին զուարթ եւ անտրտունջ կերպով սիրով
 հնազանդիլ սորվեցէք :

Թարգմանեաց Դ. Գաղղիէրէնէ ԳՕԴՈՍ ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԱՀԱԿԵՐՏ ԱՐԾԵՆԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ :

ԿԱՐՆՈՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՃՔ

Խռովութեան լուրը ըսելը ամէն ականջաց հեշտալի է . բայց
 վերջը կզգան ահոր դառնութիւնը :

Ուրիշին բարերարելու պարտական եղողը սոյնչափ յոժար չէ
 բարերարելու , որչափ որ անոր առանց պարտականութիւն ու
 նենալու կը բարերարէ :

Ինչպէս որ կողմնացոյցին ստեղծ՝ որ կողմը դարձնես կրկին
 միշտ հիւսիս կը դառնայ , ասանկ ալ յամառ ու տգէտ մար-
 դուն միտքը՝ առանց ճշմարտութեան ուղիղ աչքով նայելու
 իր զիտցածէն չըխտողի . եւ կուզէ որ ամէն մարդ իր մըտ-
 քին ծառայէ :

Իմաստունները իրենց փառքը իմաստուններէն կը գտնան
 բայց քաջերը տկարներէն :

Ինչպէս որ մուծ տեղը բան մը տեսնալու ու ճանչնալու
 հետեւողին աչքին բիւր ընդարձակելով՝ բաւական կարողու-
 թիւն ու լոյս կը տանայ եւ իր փնտռածը կը գտնայ , ասանկ ալ
 մուծ եւ անորոշ գիտութեան մը ճշմարտութիւնը ՚ի լոյս հա-
 նելու աշխատող մտքին աչաց բիւրը լուսաւորուելով իր նպա-
 տակին կը հասնի :

Ամէն բանի մէջ տկարութիւն ունեցող մարդս՝ երբոր ա՛մենակատարեալ եւ անսխալ արարածի մը տեղ զնեւու չափ՝ չափազանց գովելու ըլլամք, միշտ մեր յանդգնութեան պատիժը կը կրենք նոյն գովեալ անձէն. ասով մի միայն ամենասիրելի եւ հետեւաբար ամենագովելի կարող էակ Աստուած մը ըլլալը կը ճանչնանք :

Ա՛նմտութիւն բառը՝ անխոհեմութեամբ խօսող ու գործող մարդուն բուն մականունն է :

Արեգակին լոյսն ալ լոյս է՝ լուսինին ալ. բայց առաջինինը երկրորդէն գերազանց եւ ամենապայծառ ըլլալը հո՛վ կրնայ ուրանալ. նմանապէս ալ իմացիր աստուածաշտութեան արեգակն նման ըլլալը՝ եւ մարմնոյ կրթութեան՝ լուսինին :

Ար եւ իցէ գիտութեան կամ արհեստի մը վրայ կատարեալ տեղեկութիւն ունեցող վստահ մարդը՝ իր ունեցած տաղանդին վրայ հետաքրքրութիւն ընողները ու բժախնդիր քննիչները անգամ կը սիրէ ու կը յարգէ. բայց կիսակատար գիտունը անանկներէն կը խորշի ու կ'ատէ :

Տ. Կ. ԳԱՖԱԿԵԱՆ .

Ե . ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

ՀԱՄԱԿ

Հետեւեալ նամակն նոյն ուսումնասէր բարեկամս մեր Յակովբ Միրզայեան գրած է մեզ. որ թեպէտ մեզի վիճակաւից վանական կրօնաւոր եղբարց առ հասարակ իբրեւ մեղադրանք ու պարտաւանք կերեւի . բայց թող այսպիսի մեղանդրանք իբրեւ քաղցր գովաբանութիւն լսուի մեր թմրած ա-

կանջներուն. երբոր կերպովմը խիստ իրաւացի է իր բաժնէն զաւտատանը. եւ թէ ինչպէս, նամակին մտաց վրայ՝ վերջը խորհրդածութիւններ ընելով՝ կը բացատրենք մեր ուշադիր ընթերցողաց. որով դուքէ Հայաստանեայց եկեղեցւոյ կրօնաւորական եղբայրներն ալ համոզուին եւ այսպիսի դատաստաններէ ազատ մնամք :

ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ՀԱՅՐ

Երբէն շատ ամիսներու զիւրահորով շրջանն լրացաւ. մինչ Ձեր նամակին սպասելով՝ սրտներուս անձկութիւնն օր ըստ աւուր կը բազմանայ : Յիրաւի շատ հետաքրքրական լուր է՝ գիտել արդեօք որպիսի սատիկ զօրութեամբ նորութիւնը կը մարտնչի հնութեան հետք : Իսկզբաննէ անտի այս երկու նախանձաւոր թշնամիներն՝ իւրաքանչիւրն առանձին խումբ ուրոյած՝ մարտ կը մղեն, այլ առաջինն միշտ յաղթող գտնուելու է :

Սարգիսյին բնութիւնն՝ մին առանձին գաղտնի յարաբերութիւն ունելով տիեզերական համաշխարհական բնութեանն հետ, միանգամայն եւ նորանից իւր կախումն ունի : ջններով տեսնում եմք. բառահորով եղանակներուն հետ, երբ բնութիւն տկարանում եւ մեռանում է. դարձեալ առողջանալով յարութիւն է առնում. ընդ նմին եւ մարդկային սրտի եռանդն, ոգւոյ աշխոյժն եւ մարմնոյ յատկութիւնն նոյն ձեւերն ընդունում են : Չարմանալի յեղափոխութիւններ տեսնելու է՝ ոչ թէ մին դարւոյ միջոցումն, այլ ընդ հանուր դարերու սահմաններումն. ուր ծեր Առնոսն հիանալի պատկերացուցանէ իւր ներգործութիւններն, որպէս համայն տիեզերական բնութեան վերայ, նոյնպէս եւ առ հասարակ բոլոր մարդկային ազգին վերայ :

Ժմեան Եւրոպիոյ լուսաւոր ազգաց իմաստութեան, քաղաքականութեան եւ զանազան արուեստաբանութեան այդչափ զարմանում եմք. եթէ փոքր ինչ անցեալ ժամանա-

կին հայելու լինիմք , կը տեսնեմք նրանց թշուառ բարբարոս-
տանի միջակն : Հայաստանն յառաջագոյն սկսաւ ընդունել
բնութեան բարի ձրքերն . բայց ինչ օգուտ , կատարելութեան
չի հասաւ . այլ հեռոցհեռ նուազեցաւ : Այն ժամանակն , որ
Եւրոպոյ զանազան բարբարոս ազգերն՝ մինչ պատերազմնե-
լու մէջ շփոթուած կատաղաբար միմեանց արիւնն էին թա-
փում . Հայաստանի ուշիմ որդիքը Աթինայի մէջ՝ Աթինաս
Պալլասայ ռետումն էին սովորում : Բայց ինչո՞ւ համար նոքա
իւրեանց բարբարոսական վիճակիցն այժմեան լուսաւորու-
թեանն հասն . իսկ Հայաստանեայք իւրեանց պայծառափայլ
լուսաւոր աստիճանիցն՝ օր ըստ աւուր աղօտացան . կորսնցնե-
լով ըստ մեծի մասին Ազգութիւնն , յորոնն եւ Հայրենիքն :
Այդ մասին թէպէտ բազումք այլ եւ ոյլ պատճառներ յա-
ռաջ բերում են . իսկ նուազոս՝ տկար կարեացս չափ , Հայաս-
տանի Հոգեւորականաց անհոգութիւնը համարում եմ սորա
մի միայն էական պատճառն : (Բայց ներողութիւն կը խնդրեմք
յառաջագոյն , չըլինի թէ իմ դատողութիւններն Ձեր սրտին
գիպչողական պատճառ լինին . ըստ որում դուք եւս Հոգեւո-
րական դատակարգէն լինելով՝ դուցէ մեր գրուածքներովն
նեղանաք : Այլ Ձեր ազգասէր ոգին եւ բարի նպատակն՝ որ-
պէս ընդհանուր ազգին , նոյնպէս եւ մեզ քաջայայտ է :
Յուսամ զի ճշմարտութեանն եւս ընտրող լինիք եւ մեր տկար
դատողութեան ներքէ) :

Հայաստանն արդէն քրիստոնէական ժամակումն կորսնցուց
իւր վեհափառ թաղաւորներն . այնուհետեւ Ազգի պահ-
պանութիւնն ընկաւ հոգեւոր կառավարութեան տակ : Բայց
ափսոս . զի որպէս առաջնոյն կործանման պատճառն նա-
խանձն՝ երկպառակութիւնն եղաւ , նոյնպէս եւ յետոյն օր
ըստ աւուր տկարանալուն պատճառն՝ նոյն սալայէլի ոգին
եղաւ : Փառասիրութիւն տիրեց ամենեցուն , վանքերն մէկ
մէկ դղեակներ դարձան . մեր պատուելի Խաչադա-լի-ն ա-
Ռնայո-ն Ասողներն առանձնացան նոցա մէջ : Յիրաւի ,
եթէ մին այլ յարմար տեղի գտանէին իւրեանց հանդիստ ,

ծոյլ, անպիտան կեանքն դիւրութեամբ անցուցանելու՝ վանքերն ալ թող կուտային : Բայց ուստի կարող էին գտանել այնպիսի տեղը . ուր որ Ազգն ջերմեռանդ ոգւով թափուով է իւր ողորմութեան բարիքներն : Թէպէտ իւր հովիւներն՝ զինքն անտերուհի՝ զազանաց ժանիքներումն թողած՝ ինքեանք հեռացել են : Բայց նա՝ (Ազգն) միշտ իւր սրտին մէջ պահպանում է իւր աներախտ կրօնաւորաց յարգն :

Լաւրոպայիք՝ որչափ աւելի ջանք են տանում ուսումնաբանարաններն բազմացուցանելու եւ տպագրութիւնն յառաջ տանելու՝ Հայաստանի վարդապետներն այնչափ հերքում են : Այս երկուստ միայն պատճառ լինելով՝ հասարակաց լուսաւորութեանն, եթէ Հայաստանի մէջ եւս դործի դրուին՝ կարող են մեր այս քան Հայրսուրբերու յարգութեանն փոքր լինել պակասութիւն բերել : « Որովհետեւ երբ այժմեան նախադաշարեալ հնասէր ծերերն վերջացան եւ ազգին մէջ գիտնական անձինք զոնուեցան՝ այլ եւս չեն թողուլ կրօնաւորներն վանքերու, անապատներու սեննակներումն փափկանալ : այլ նոցա սեպհական պաշտօնն հասկացնել տալով, կատարելն ըստ արժանւոյն ժողովրդեան համար հոգ տանիլ, ինչպէս նախնի Սուրբն Սահակ, Սուրբն Մեսրոպ եւ այլն անձնանք . ուէր Սուրբ Հարք, աշխատում էին ազգին մտաց լուսաւորութեան համար : եւ քարոզութեամբ Սուրբն դրոց առաքելութիւն հաստատում էին նրանց սրտին մէջ :

Ազգին սէրը, մանաւանդ Եւրոպացւոց օրինակներն, մեծ յորդոր եղաւ ձեռ յառաջ տանելու հայրենեացդ մէջ այն ամենահարկաւոր ձեռնարկութիւն, որն ծնանիլ ունի շատ պիտանի օգուտներ : Բայց իբրեւ նոր բան եւ թշնամի հնութեան հետ՝ մեծ ջանք մեծ գթութեամբ իւր պահանջն ըստ ամենայն մասին : Որոյ համար ամենայն բանից առաւել հարկաւոր է համբերութիւն : Դժուարին է մին տպաւորութիւն իսպառ ջնջել եւ սյրովն փոխարինել . իսկ համբերութիւն պէտք է, մինչ ժամանակն ինքնին՝ ի կատար ած է . դժամանակն է պսակող ամէն բարի նպատակներու :

Խոհեմութիւնն միանգամայն դատաւոր ընտրելով, նայելով է, ամէն կողմերիցն, որ թէ ներկայի համար եւ թէ ապառնուց համար մին արգելք չը հասնի, որ ձեր նպատակի խանգարմանն պատճառ կարող է լինիլ. շուտով նորա դէմն առնելու է ամենայն զգուշութեամբ : Եւ ամենայն բանից առաւել վստահանալու է Փրկչի նախախնամութեանն եւ անյուսահատութեամբ կամաց կամաց յառաջ տանելու է գործն :

Կաղօթեմք առ Յիսուս որ իր շնորհաց նշանն կաթեցնէ դարձեալ Հայաստանին վրայ, ինչպէս երբեմն Սուրբ Խման տեղին. որով պայծառ լուսաւորուին Գրիգորի որդիքները՝ զարգանան ուսման յառջադիմութեամբ : Այլբանս կարճառօտ գրելով, կը մնամ կարօտալի սուրբ աջյդ համբուրմանն :

ՅԱՎԱԿ ՄԻՐԶԱՅԵԱՆ

ՄԵԼԻՔ ՅԱՎԱԿԵԱՆՅՑ

ju h.

Նամակագիր հեղինակն սուր դիտողութիւններ կրնէ մեր հայրենի երկրին եւ ժողովրդեան յետախաղաց վիճակին վերայ. եւ ասոր պատճառը նախ երկպառակութիւն եւ նախանձ կը դնէ. որոնք իսկ պատճառ եղան հայկազանց թափաւորութեանն վերջանալուն. իսկ Հայոց Գրիստոնէութեան դարուն ատենները երբոր արքայական կառավարութեան իշխաններ թիւնը կը վերջանայ եւ Հայաստան կը մնայ միմեայն հոգեւորական կառավարութեան ձեռքը : Ուստի նամակագրին կարծիքն այս է որ մեր հայրենեաց վերջին յետախաղացողութեան պատճառը՝ հոգեւորականաց թոյլտուութիւն եւ անհոգութիւնն է. որով իսպառ այն պատուական ազգին նախկին փառքն եւ պարծանքն հետ զհետէ անշքացաւ եւ վերջին թշուառութեան հասաւ :

Արդարեւ ազգի մը եւ ժողովրդեան եղանկութիւնը թէ հոգեւորապէս եւ թէ մարմնաւորապէս երկու հիման վրայ կը կայանայ. այսինքն Տրդատայ եւ Գրիգորի մէկին ձեռք սուր

Դա հարկութիւն ապստամբիցն, իսկ միւսոյն խաչ եւ աւետարան իբրեւ հղոր զօրակից եւ օգնական առաջնոյն, եւ այս քսած իս միտքը խորենացի հայրն գեղեցիկ կը բացատրէ սրբոյն Տրդատայ անպարտական մահուան ճառին մէջը : Մանաւանդ Բրիտտոսեան եկեղեցւոյն հաստատութեան եւ ծաղիկելուն համար եւս բարւոք կը երդէ Շարսիան . « Պսակեցիր Առաքելովք եւ Մարգարէիք եւ հաստատեալ ամրացուցիր սուրբ Թադաւորօք » : Բայց ողջախօհ միտքերը իբրեւ Թող չը կարծեն որ Բրիտտոսի եկեղեցին ամէն տտեն եւ ամէն պարագայի մէջը կարօտ կըլլայ Տրդատայ կամ Թէոդոսի յաղթողական սուրերուն . հապա իրեն բաւական են միայն ուղքատ անտոճմիկ Առաքելոց նման անթուշակ զինուորները . Գրիգորի, Ներսիսի, Ոսկեբերանի նման ընտրեալ քաջ հովիւները, նմանապէս Մեսրոպայ, Մովսիսի, Եղիշէի նման եկեղեցւոյ մանկանց ընտրեալոցն դաստիարակները :

Այս վերջին դարուս մէջը երբոր այսպիսի հոգեհանձար դաստիարակները պակսեր են Հայաստանեաց եկեղեցիէն ու յետին մնացորդ եկեղեցականներս ալ նոյն դաստիարակաց շաւղէն բոլորովին խոտորելով՝ առաւել մեր անձին հաճոյաւ կուղեմք բան թէ Բրիտտոսի եկեղեցւոյն : Ասոր համար է որ արդար եւ իրաւացի դանգատներ կընէ ուսումնասէր Նամակագիրն : Վանքերն, կըսէ, մէկ մէկ դղեակներ դարձան . բայց Թող անանկ չը կարծեն վանական եւ անապատասէր Եղբայրները որ իրենք Սուրբ Ստեփանոսին նման իրենց անմեղ բազուկներ դէպ 'ի երկինք տարածելով՝ ջերմեռանդ աղօթքներ կը նուիրեն Հայաստանեայց եկեղեցւոյ պայծառութեան համար, ու նամակագիր հեղինակն խտապարանոց եւ անթրիատ սրտով ղերենք հրէաբար կը բարկոճէ . ոչ բնաւ, հեղինակին խօսքը եթէ ողջամիտ մտօք խմանամք . չի հասկըցուիր այն կարգի վանական եղբայրներ կամ անապատասէր ճգնաղգեաց հայրերը . որոնք աշխարհէն հեռանալով միայն սուրբ աղօթից կը պարապին եւ չունին հովուական ոգւոյ ձիւրքերը կամ Բրիտտոսական տաղանդին այն արծաթը, զոր

կրկնապատիկ շահեցնելով տիրոջ առաջ պարծանք ունենալն
 իբրեւ հաւատարիմ ծառայ տաւ կամ հինգ քաղաքներու վրե-
 յոյ տիրելու . հապա մասնաւորապէս այն վանական եղբարց
 համար կսէ . որոնց պարգեւերէ Ատուած իր սուրբ շնորհաց
 տաղանդ . հովուական ոգւոյ ձիրքերը , քաջաբարոյութեան
 համարձակութիւնը , եկեղեցւոյ գերդաստանին իմաստուն
 անտեսական կառավարութիւնը եւ այլն : Ուստի երբոր մեք ե-
 կեղեցական դասքս այս քրիստոսատուր տաղանդներ հեղգու-
 թեան վարչամակին կամ վանից խուցերուն մէջ թաղելով
 առանց կրկնապատիկ շահուց դարձեալ Տիրոջ ձեռք յանձ-
 նեմք . արդարեւ իրաւունք ունին ամէն հայկազն ուսումնա-
 սէր անձինք զմեզ դատելու եւ պարտաւելու :

Կը խորհի դարձեալ նամակագիրն թէ արդի ժամանակ որ
 գրեթէ աշխարհական կարգէն հետզհետէ ուսումնական ան-
 ձինքը կը շատնան եւ ալ չպիտի թողուն որ նոյն վանական
 եղբայրներ միշտ անհոգութեան վարչամակին մէջ պահեն ի-
 րենց յանձնուած տաղանդը . հապա ժիր եւ հաւատարիմ սեւ-
 ղանաւորիմը նման զանի պիտի շահեցնեն եկեղեցւոյ մանկանց
 դաստիարակութեամբ : Այն ժամանակն է ահա , կրսէ հե-
 ղինակն , որ 'նորութիւնը' հնութեան կը յաղթէ եւ նախա-
 պաշարմունք իսպառ կը վերջանայ Հայոց աշխարհէն եւ անդ-
 րէն իր բազմաթամանակեայ ծածկուած դրօշակ կը բանայ
 Մասեայ դադաթան վրայ թարգմանչաց այն ոսկեղինիկ
 դարը . որով երջանկութիւն կը համբուրէ Հայաստանը եւ իր
 այժմեան թշուառութիւններ կը վեջսնան :

Ուրեմն , վանական եղբարք , պէտք է մեզ , որ հեղդու-
 թեան բունէն արթննամք եւ եկեղեցւոյ անխնամ մանկանց
 եւ ազգին յառաջադիմութեան համար անձնանուէր ծառայ-
 ութեամբ հոգ տանիմք : Արծիւը որ ձեր կրտսերագոյն եղ-
 բայրն է , մի այնպէս կարծեք , որ ատելութեան կիրքովմը այս
 նամակին հրատարակութեամբ իր պաշտօնակից եղբայրները
 պախարակել կուզէ . որպէս զի իր փառքն աւելի տեղիք ունե-
 նայ ազգին առաջը . քա՛ւ ոչ բնաւ : Արծիւ ճանչցող բոլոր

հայկազունք վկայ են որ իւր հայրենասէր սրտին մէջը ատե-
լութեան կիրքերը տեղիք չունին : հապա ցաւալից սրտով յա-
կամայից հրատարակեցի . որպէս զի զգուշանամք եւ մեզի
յաճնուած պաշտօնը Տիմոթէոսի նման ժիր գործունէու-
թեամբ կատարելապէս գլուխ տանիմք : Երբոր եկեղեցւոյ
բարձր բեմին վրայ կեցած բոլոր ժողովուրդը մեր դատաս-
տանին տակ ձգելով զիրենք դատելու կը ջանամք . իրենք ալ
իրաւունք ունին զմեզ դատելու , երբոր վայրաստիճան ժողո-
վըդատեղէն աչքերնին դէպ 'ի բեմն դարձուցած քարոզու-
թեան հետը մեր գործքերը համեմատելով պակաս կը գտնեն ,
որով մեծապէս կը գայթաղին եւ այսպէս զմեզ դատելու ի-
րաւունք կը ստանան . ասով , աւանդ , պատասխանատու պիտի
ըլլամք աւետարանական պատգամին . թէ զգոյշ լինուք չգայ-
թակեցուցանել զմի 'ի փոքրկանցս յայոցանէ :

Յատկապէս Աւետարանին պաշտօնէից համար զուրցերէ
Յիսուս . « Դուք էք լոյս աշխարհի » . Ուստի վայ եւ հաղար
եղունկ մեզ երբոր մեր անհոգ կենցաղավարութեամբ փոխանակ
լոյս տալու . տգիտութեան ստուերով պատած ժողովրդեան մը ,
աւանդ չիջած ճրարի մը նման խաւար դառնալով եւ ոչ մեր
խկ անձն անգամ լուսաւորելու իմաստութեան փոքրիկ նը-
շոյլ մը վառուած ունիմք միտքերնուս մէջը : Դուք էք , կըսէ
դարձեալ նոյն Յիսուս , աղ երկրի . հապայ երբոր հեղգու-
թեամբ , տգիտութեամբ անհամ դարձեր եմք , արժանի չեմք
արդեօք արտաքս ձգուելու եւ այսպէս բամբասանաց ոտից
կոխան ըլլալով իբրեւ անպիտան եւ ոչինչ համարուել ո՛հ :



ԱՆՁՆԱՆՈՒԷՐ ԳՈՐԾԱԿԱԼԷ:

ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ.

ՎԱՆ, Մկրտիչ Տ. Ատոմեան 'ի գրանդի վասպուրական
Արծուոյն:

ՎԱՐԻՆ, Խաչատուր Խան Տ. 'Երսիսեանց եւ միանգամայն
գործակալ Տարոնոյ եւ Ռուսաստանի Հայոց:

ԲԱՂԷՇ, Մ. Ղարիպճան Աղա Մ. Շողիկեանց:

ՏՐԱՊԷՉՈՆ, Աղաճան Աղա Յովհաննիսեան:

ՊՕԼԻՍՊ, Յակովբ Աղուանեան վանեցի 'ի Պալթաճի Խան:

ԶՄԻՒՌԻՆ, Պ. Սարգիս Տէր Մարգարեան վանանդեցւոյ:

ԲԵՐԻԱ, Յովհաննէս Աղա Միսաքեան:

ՍԱԼԱՄԱՍՏ, Յակովբ Միրզայեան Մէլիք Յակովբեանց. մի-
անգամայն գործակալ Պարսկաստանի Հայոց:

ԳԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ.

Ի վան, 'ի Վարին, 'ի Մուշ, 'ի Բաղէշ, 'ի Տրապիզոն 2 ու կէս
Օսմանցի քսան ղուրուշնոց արծաթ Մէճիտիէ:

Ի Պօլիս, 'ի Զմիւռին, 'ի Բերիս, երեք արծաթ քսան
ղուրուշնոց Մէճիտիէ:

Ի Ռուսաստան եւ 'ի Պարսկաստան, այսինքն 'ի Տփլիս, յԱ-
ղէքսանդրպօլ, 'ի Դավրէժ եւ այլն, չորս արծաթ Մանէթ:

Գին միոյ տետրակի 6 ղուրուշ: Ճանապարհին ծախքը
Խմբագիրը պիտի վճարէ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԻՍ ԱՍՏՈՒԱԾՊԱՀՏՈՒԹԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱՀԵՆ ՀԱՐՑ

Սուրբ Մեսրոպ Հեղինակի Գրիչ Հայկական գրքից 167

ՀԱՆԻՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱՀԵՆ ԱՌԱՔԻՆՆԱՅ

Երկրորդ Գրքի Արշակունի Արշակ Արշակ Հայր 173

ՏԵՍԱՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՀԱՐՀԱՅ

Ան Խաչ Հայրապետից 178

ԲՈՒՐԱՍԱՆ ԲԱՐՑԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ

Արք եւ Մայր Սրբազան Գրքից 184

Բարոյական Առաջ 186

ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

Լոյսի Յոնիք Միլլայեան Միլլայեանից 187